

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 11-ՐԴ ՆԻՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
ՀՈՒՇԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<p style="text-align: center;">ՄԻՋՈՑԱՌՈՒՄ (Հուշագրով ամրագրված դրույթ)</p>	<p style="text-align: center;">ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ</p>	<p style="text-align: center;">ՀԱՆՁՆԱՐԱՐԿԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔ/ ԶԿԱՏԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ</p>
<p>1.5 Կողմերը պայմանավորվեցին ՀՀ Սյունիքի մարզի և ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգի միջև միջմարզային համագործակցության ակտիվացման և զարգացման ուղղությամբ:</p>	<p>ՀՀ Սյունիքի մարզպետարան</p>	<p>Ի կատարումն 2012թ. հոկտեմբերի 25-ին հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի 11-րդ նիստի փոխըմբռնման հուշագրի 1.5 կետի, 2013թ. հունվարի 14-15-ը ՀՀ Սյունիքի մարզպետի գլխավորած պատվիրակությունը այցելեց ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգ: Այցի ընթացքում կողմերի գյուղատնտեսության պատասխանատուների կողմից ստորագրվեցին 4 համաձայնագրեր:</p> <p>Պատասխան այցով 2013թ. փետրվարի 1-3 ՀՀ Սյունիքի մարզ այցելեց ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգապետի գլխավորած 61 հոգանոց պատվիրակությունը: Այցի ընթացքում Կապան քաղաքում անցկացվեց «Բարեկամության կամուրջ» համատեղ միջոցառումը:</p> <p>Իրանական կողմը 06.03.2013թ. ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով ՀՀ Սյունիքի մարզպետարան է ներկայացրել Թավրիզի նավթաքիմիական ընկերությունների արտադրանքների ցանկը, որոնք մարզպետարանի կողմից տրամադրվել են մարզի համայնքներին, գյուղացիական տնտեսություններին, հանքարդյունաբերական ձեռնարկություններին և</p>

		<p>նավթամթերք օգտագործող այլ խոշոր կազմակերպությունների:Վերոնշյալ կազմակերպությունների կողմից մարզպետարանը դեռևս առաջարկներ չի ստացել:</p> <p>Միաժամանակ իրանական կողմը առաջարկել է համագործակցել կրթության, առողջապահության և հանքարդյունաբերության ոլորտնորում: Գործընթացը ընթացքի մեջ է:</p> <p>Վերոգրյալը ՀՀ Սյունիքի մարզպետի 16.04.2013թ. թիվ 01/3007-13 և 01/16/3006-13 գրություններով, ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով, ներկայացվել է իրանական կողմին:</p> <p>ՀՀ Սյունիքի մարզպետի 06.12.2013թ. 01/16/7293-13 գրությամբ ներկայացվել են առաջարկություններ հայ-իրանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 12-րդ նիստի փոխըմբռնման հուշագրում ներառելու նպատակով:</p>
--	--	---